



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՂՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՏԻՍՍՈՒՆՆԻՄԼԿԵՐՈՐԿ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1872



ԿՈՍՏԱՆԳՆՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Յ. ՔԻՐՐՉԻԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ՍՄԻՆ

ՆԻՍՏ ԾԱ.

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏԱՏԵԱՆ Յ. ԷՖ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1^o Ընտրութիւն Քաղաքական ժողովոյ 4 անդամոց :
- 2^o Կոնդակ վեհ. կաթողիկոսի :
- 3^o Ատենական կանոնադրութիւն :
- 4^o Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
- 5^o Հարցումն ինն երեսօխոսանաց :
- 6^o Առաջարկութիւն տասն եւ եօթն երեսօխոսանաց Սահմանադրութեան վերաքննութիւնը Մասնաժողովոյ մը յանձնելու համար :

Ատենապետ Է. Ֆ. ծանոյց անձնական տկարութեան պատճառաւ քանի մը բացակայ երեսօխոսանաց անունները, եւ յայտնեց որ թէպէտ Քաղ. ժողովոյ չորս անդամոց ընտրութիւնն օրուան խնդրոց կարգին առաջինն է, բայց որովհետեւ տակաւին մեծազոյն մաս գոյացած չըլլալուն՝ չէր կրնար ընտրութեան ձեւնարկուիլ, ուստի հրաւիրեց ժողովը որ եթէ կուզէ յաջորդ խնդրոց վրայ վիճաբանութեան օկոսի, զիտեղ տալով միանգամայն թէ քանի որ ժողովն իւր օրինաւոր թիւը չունի, եղած վիճաբանութիւնն ալ որոշում մը, հետեւութիւն մը չի պիտի արտադրէ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Օրուան կարգին մէջ նշանակուած վերջին խնդիրը՝ որ Սահմանադրութեան վերաքննութեան կը վերաբերի, կարծեմ առաջ պէտք էր անցնէր, սակայն սըխալմամբ ամենէն ետքը դրուած կերելի ինձ :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Ընդհակառակն ճշդիւ իւր տեղը դրուած է, վասն զի այդ առաջարկութիւնը նոր է, եւ իբր վերջին խնդիր մը, օրուան կարգին մէջ վերջին տեղը կը բռնէ :

Քաղ. ժողովոյ չորս անդամոց ընտրութեան խնդրէն ետեւ՝ վեհ. կաթողիկոսին կոնդակը կուզայ, որու վրայ արդէն վիճաբանութիւն բացուած է, եւ ժամ է զայն շարունակելու, քանի որ ժողովն մեծազոյն մաս չունենալուն պատճառաւ չկրնար ընտրական գործերով պարապիլ :

(Բանի մը վայրէտն ընդհանուր Ընտրութիւն)

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սահմանադրութեան վերաբերման նկատմամբ եղած առաջարկութիւնը Վեհ. կաթողիկոսի կոնդակէն առաջ չ'կրնար անցնիլ, այս ճիշդ է, սակայն կը դիտեմ որ ժողովը կը լռէ եւ իւր իմաստութեամբ իմ խորհրդածութիւնս կը հաստատէ թէ առանց մեծագոյն մասի վիճարանութիւնն անօգուտ է եւ ապարդիւն:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Վիճարանութեամբ խնդիրը կը լուսաւորի՝ եւ երբ մեծագոյն մաս գոյանայ որոշումը կը դիւրանայ. արդէն կանոն է որոշեալ ժամուն ատենը բանալ, վիճարանիլ եւ որոշումը մեծագոյն մասի վերապահել:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը քանի որ մեծագոյն մաս չունի, չ'պիտի կրնայ Քաղ. ժողովոյ չորս անդամոց ընտրութեան ձեռնարկել, հետեւապէս կարգը կուգայ Վեհ. կաթողիկոսի կոնդակին: Կը յիշէք անշուշտ որ անցեալ նիստին առաջարկութիւն մ'եղաւ Գիւանին կողմանէ, այն է յատուկ Յանձնաժողով մը կարգել որ այս խնդիրը քննէ եւ տեղեկագիր մը ներկայացնէ:

ԽՍՏՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ.— Խնդիր եղաւ թէ պէ՞տք է առանց մեծագոյն մասի ներկայութեան ատենն բանալ կամ ո՛չ, եւ ժողովոյ մէկ որոշումը մէջ բերուելով ըսուեցաւ որ այսպիսի պարագայի մէջ՝ ատենը կը բացուի միմիայն վիճարանելու պայմանաւ: Բայց քանի որ այս վիճարանութիւնը եզրակացութիւն մը չունի, քանի որ խնդիր մը միշտ մեծագոյն մասով որոշման պիտի դրուի, ըստ իս լոկ վիճարանութեան համար ատենն բանալու որոշումը նշանակութիւն մը չ'կրնար ունենալ, եւ երեսփոխաններուն բացակայութեան առիթ մը կ'ըլլայ, ուստի կառաջարկեմ որ այն որոշումն ետ առնուի:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ.— Քանի որ ժողովը այսօր մեծագոյն մաս չունի, չ'կրնար օրինաւոր նիստով տրուած որոշում մը ջնջել:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Թէեւ ժողովը այսօր մեծ մաս ալ ունենայ տակաւին չկրնար, ինչպէս Պեկեան էֆ. կը կարծէ, այդ որոշումը ջնջել, վասն զի այդպիսի խնդիր մը կանխաւ նշանակուած չէ օրուան կարգին մէջ, երբ որ եւ է նոր խնդիր մ'երեւան եկնէ, օրինաւորութիւնը կը պահանջէ որ նախ խնդրոց կարգն անցնելով երեսփոխանաց հաղորդուի, եւ այնուհետեւ յատենի ժողովոյ վիճարանութեան ենթարկի եւ որոշուի օրինաւոր նիստով:

Կրնայ պատահիլ այնպիսի խնդիր մը՝ որուն

վրայ ես անտարբեր լինիմ եւ ժողովոյ չ'ներկայանամ, բայց խնդիր ալ կ'ըլլայ, որ ինձի համար մեծ կարեւորութիւն ունենայ եւ զիս ժողովին բերէ երբ խնդրոց կարգին մէջ նշանակուած լինի: Արդ՝ երբ ժողովը այդ կարգի խնդիր մը յանկարծուստ յուզէ եւ լուծէ առանց կանխաւ օրուան կարգը անցած եւ հրատարակուած ըլլալու, ես որ անոր համար պատրաստ էի ժողովոյն գալու, նոյն օրը յանգէտս բացակայ՝ եւ իմ երեսփոխանական իրաւունքս գործադրելու անկարող կ'ըլլամ, ուրկէ անվտանգութիւն կրնայ ծագիլ ապագային համար:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ամեն օրինաւոր ժողովներու մէջ՝ խնդրոց կարգը անշփոթ կը պահեն, եւ անոր կը հետեւին անվրէպ, բայց երբեմն կը պատահի այնպիսի արտաքոյ կարգի խնդիր՝ զոր ժողովը կարեւոր եւ ստիպողական դատելով կը նախադասէ: Այսպէս ալ Ընդհ. ժողովըն երբ օրինաւոր նիստի մէջ հաստատէ յարուցեալ խնդրոյն կարեւորութիւնը, օրուան կարգին մէջ կ'անցնի, միւս խնդիրներէն առաջ եւ ժողովոյ նկատողութեան կ'ենթարկի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ընդհ. ժողովը իւր ներկայ շրջանին մէջ այս ՅՂԷ. անգամն է որ կը գումարի, եւ եթէ լաւ կը յիշեմ, այսչափ բազմաթիւ նիստերու մէջ երեք անգամ միայն մեծագոյն մաս չէ ունեցած, մինչդեռ ժամանակ մ'այս դժբաղդութեամբ կը վարակէր շատ անգամ:

Ընդհ. ժողովը նախորդ որոշմամբ մ'ատենան բանալու կանոն մը սահմանեց, երկու նիստեր զոհելով, եւ այս նոր կանոնին շնորհիւ հիմայ մեծագոյն մասի չգոյութեան ատենն ալ իւր նիստերը ամբողջութեան չեն դատապարտիր գլխովին: Այս առաջին փորձը մեծ դժուարութեան մ'առաջքն առաւ, այսպէս ուրիշ ամեն դժուարութիւն եւ արգել հետզհետէ կը վերնան. ամենէն մեծամուր պարիսպներն անգամ քանդելու համար անոր չէնքը կազմող քարերը պէտք է մի առ մի աւերել եւ փլցնել:

Եւ ի՞նչ է ատենան բանալու համար դրուած այս կանոնը՝ որու օգտակարութեան վրայ հիմայ կ'երկմտին ոմանք, եւ անոր բարձուրը կ'ուզեն:

Որոշեալ ժամուն ատենը բանալ անվրէպ, օրուան կարգի խնդրոց վրայ վիճարանիլ, իսկ որոշումը մեծագոյն մասի ներկայութեան վերապահել: Կը յիշեմ որ Ընդհ. ժողովը այս կանոնը սահմանած ատենն՝ ինչպէս նաեւ հիմա, ոմանք ըսին թէ՛ ի՞նչ օգուտ երբ ժողովը վիճարանի եւ

որոշում տալու անձեռնհաս գտնուի, մեծագոյն մասի չգոյութեան պատճառաւ:

Բայց այս հետեւութիւնը սխալ էր եւ ատենը բանալու համար դրուած կանոնին ողին միջին կը մնար: Երբ Ընդհ. ժողովոյ ատենը մեծագոյն մաս չեղած ատենն ալ՝ որոշեալ ժամուն բացուի եւ խնդրոց մը վրայ վիճարանութիւն լինի, բնապէս կարծիքներն կը լուսաւորին, խնդիրն իւր լուծումը կ'առնու, եւ որոշումը՝ արդէն կերպաւորուած՝ կը տրուի անմիջապէս, երբ մեծագոյն մաս գոյանայ, եւ ժողովը կանցնի ուրիշ խնդրոց: Մինչդեռ երբ ժողովը մեծագոյն մասի ներկայութեան սպասէ իւր ատենը բանալու համար, ժամանակ պիտի կորուսանէ եւ ինչ որ առանց մեծագոյն մասի ներկայութեան ատենը բանալով պիտի կրնար ընել, այսինքն վիճարանիլ, խորհրդակցիլ, խնդիրը լուսարանել եւ տրուելիք որոշումը դիւրել, պատրաստել, պիտի թողու մեծագոյն մասի ներկայութեան, եւ ստէպ նիստերը պիտի վերջացնէ առանց որոշման կարող լինելու:

Բացատրեմ խօսքս քանի մը օրինակ յիշելով:

Մինչեւ ցարդ երբ ատենը բացուէր մեծագոյն մաս չգտնուած ատեն, Ատենապետը նախորդ նիստերու ատենագրութիւններ՝ եթէ կային՝ անվաւեր թողուած, ժողովոյ ղիտողութեան կենթարկէր, նոյնպէս եթէ երեսփոխանական նորոգ ընտրութեանց տեղեկագիր մը կար, կը ներկայացնէր եւ ժողովը կը հրաւիրէր իւր ղիտողութիւնն ընելու, եւ երբ ղիտողութիւնները կը ներկայանային, եւ գործը որոշում ընդունելու աստիճանի կը հասնէր, Ատենապետը՝ ինչպէս ատենագրութիւններն ալ կը ցուցնեն, կը դառնար կըսէր. որովհետեւ ժողովը իւր օրինաւոր թիւը չունի դեռ, վաւեւերացումներն առկախ կը մնան, եւ կ'անցնէր ուրիշ խնդրոց: Իսկ երբ մեծագոյն մաս գոյանար, առկախ խնդիրները ձեռք կ'առնուր հետըզհետէ, անոնց որոշումը կը խնդրէր եւ ժողովը քուէ կուտար առանց ՚ի նորոց այդ խնդիրներն եկած եւ պակաս թիւը լրացուցած կ'ըլլային, առ ամօթոյ չէին համարձակէր ձայն բառնալ եւ ղիտողութիւններ ընել: Այս կանոնը դրաւ ժողովը եւ գործադրել սկսաւ, վասն զի մէկ կողմէ մեծ ղիտութիւն կընծայէր այն որոշում տալու եւ նիստերն արդիւնաւոր գործելու, եւ միւս կողմանէ ժողովը կաշկանդումներէ ազատելով կը դոցէր անոր առջեւ նեղը մտած

ժամանակ առանց մեծագոյն մասի որոշումներ տալու դուրը:

Արդ՝ մեր առջեւ կայ Վեհ. կաթողիկոսի կոնդակի խնդիրը եւ դայն Յանձնաժողովոյ մը քննութեան յանձնելու համար նախորդ նիստէն մնացած առաջարկութիւն մը. Հա՛րկէ արդեօք այս առաջարկութիւնն ընդունիլ, խորհիմք, վիճարանիմք, եւ երբ գործը որոշման կամ Յանձնաժողովոյ ընտրութեան դայ, խնդիրն հասուն կը թողումք մեծագոյն մասին որոշման, եւ կանցնիմք ուրիշ խնդրոց, եւ այսպէս մեծագոյն մաս երբ գոյանայ որոշումները կը տրուին հեշտիւ:

Նախադաս Սրբազանը ատենը չբացուած մեծագոյնմասի խնդրոյն վրայ այլ եւ այլ ղիտողութիւններ ըրաւ ժամանակին սահիլը յիշեցնելով մեզ: Այո՛, ժամացոյցին սլաքը՝ անդուլ կը յառաջանայ, բայց հնար է մեզ անկէ օգուտ քաղել, հնար է մեզ գէթ որոշումներն նախապատրաստել: Մեծագոյն մասի խնդիրը թեթեւ խնդիր մը չէ որ այսօր այս թերի նիստին մէջ կարելի լինի լուծել եւ արդէն եղած որոշում մը առ ոչինչ գրել, Ի բաց թողումք այսպիսի խնդիրներ, եթէ այսօր մեծագոյն մաս չգոյացաւ պարագաները ՚ի միտ առէք, ի՞նչ հրատապ օդ կայ այսօր, եւ ո՛րչափ անագան հրատարակեցաւ ժողովոյ գումարման հրաւէրը: Թերեւս այս պարագաները պատճառ եղան մեծագոյն մասի չըգոյութեան: Անցնիմք ուրեմն Վեհ. կաթողիկոսի կոնդակի խնդրոյն:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ.— Պէտք է օրուան կարգին անցնիլ:

Ժողովոյն հաւանութեամբ Ատենապետ էֆ. վերջ կուտայ մեծագոյն մասի խնդրոյն եւ կանցնի օրուան կարգին:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչպէս կը յիշէք Վեհ. կաթողիկոսի կոնդակին վրայ նախորդ նիստին երկար վիճարանութիւններ եղան, եւ չկրցաւ որոշուիլ թէ արդեօք պէ՞տք է երեսփոխանական ժողովէն ուզուած անձինքը դրկել թէ ոչ, ՚ի վերջէ Գիւանն առաջարկեց Յանձնաժողով մը կազմել եւ անոր յանձնել որ այս կոնդակի խնդիրը քննէ, եւ տեղեկագիր մը բերէ ժողովոյն:

Ահաւասիկ այս վիճակին մէջ կը մնայ խընդիրը, կը հրաւիրեմ երեսփոխանները լրենց կարծիքն յայտնելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Անցեալ նիստին Աղաբէկեան էֆ. առաջարկութիւն մ'ըրաւ, այն է

Վեհ. Կաթուղիկոսի կողմանէ ուղուած երկու երեսօրիսաններն յուղարկելով պաշտօն տալ տնոնց որ Ռուսաստանի մերազնէից կացութիւնը եւ ազգային հաստատութեանց, այսինքն եկեղեցեաց, վանօրէից, եւ դպրոցաց վիճակը քննեն եւ տեղեկագրեն, Այս առաջարկութեան վրայ կուզէի խօսիլ այն ատեն, սակայն ըստ որում նիստը վերջանալու վրայ էր, հարկադրեցայ լռել, այսօր ահաւասիկ կը պատասխանեմ:

Այս տեսակ քննութիւն մ'ընելու առաջարկութիւնը ծանր նշանակութիւն մ'ունէր, եւ հարկ էր նախ անոր վրայ մտածել լրջօրէն, Ռուսաստանի մէջ քննութիւն մը բանալ, եւ զայն մինչեւ Ռուսիաբնակ ազգայնոց վիճակին, եւ անոնց ազգային հաստատութեանց վրայ տարածել, ի պաշտօնէ անոնցմէ տեղեկութիւններ խնդրել, չեմ կարծեր որ մեր ձեռնհասութեան եւ մեր բուն խնդրոյն պատկանի, ուստի անտեղի կը գտնեմ ես առաջարկութեան այդ մասը: Դառնանք կոնդակի խնդրոյն:

Վեհ. Կաթուղիկոսը կոնդակ մը կ'ուզարկէ ՚ի Կ. Պօլիս ժողովի մը՝ որ Տաճկաստանի հայերը կը ներկայացնէ, եւ երկու պատգամաւոր կուզէ անկէց, Սոյ եւ Աղթամարայ կաթուղիկոսական խնդրոյն վրայ խորհրդակցելու համար: Սակայն մեր պատգամաւորներն որո՞ւ պիտի գիմեն, Հայոց ընդհանրական Հայրապետին, եւ թէ Ռուսաստանի մերազնէից ներկայացուցին:

Ո՛ւր է Հայոց Կաթուղիկոսին խորհրդական ժողովը, որո՞ւ հետ այդ խորհրդակցութիւնները կատարուին:

ԽօճԱՍՏՐԵԱՆ Օ. ԷՖ.— (Ընդհանրական) Ս/սալ է այդ կարծիքը, Ըջմիածնի Վեհ. Կաթուղիկոսը Ազգին ընդհանրական Հայրապետն է:

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ.— Ի՞նչ է այդ խորհրդական ժողովին անունը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Խօսքը շարունակելով) Երբ Վեհ. Հայրապետին պիտի գիմեն այս խնդրոյն համար՝ որ նոր է, որ ազգային եկեղեցւոյ կը վերաբերի, անհնար է որ երթան ու Վեհ. Հայրապետին հետ խորհրդակցութիւն մ'ընեն առանձինն, առանց ժողովոյ մը ներկայութեան. եւ եթէ Վեհ. Կաթուղիկոսն իրբեւ Հայրապետ պիտի խորհրդակցի, պէտք էր որ ո՛չ միայն Տաճկաստանի հայերէն, այլ եւ Ռուսաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Աւստրիոյ հայերէն եւ բոլոր ուրիշ հայաբնակ երկիրներէն ալ երկերկու մարդ ուզէր եւ այսպէս ժողով մը կազմեր: Եթէ Վեհ. Կաթուղիկոսը պէտք չ'էր

տեսներ եկեղեցական Ընդհ. ժողովոյ նախկին Ընդհ. ժողովոց կանոնին պէտք էր համակերպէր եւ նոր կանոն մը չ'հնարէր: Թո՛ղ ներկայ գրտնուող եկեղեցական Հարք խօսին, յիշելով որ խնդիրը Կիլիկոյ Կաթուղիկոսական յարաբերութեանց վրայ է:

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ.— Քիւրքճիպաշեան էֆ. ները առտենարան էֆ. ին հետ բանակոտի մը կսկսին, որ Ատենապետ էֆ. ին ազգարարութիւններովը վերջ կը գանէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Շարունակելով) Գիտել արժան է որ Վեհ. Կաթուղիկոսն իւր հեռառագրին մէջ կըսէ թէ Սոյ խնդիրը չէ թէ Տաճկաստանի երեսօր. ժողովոյն, այլ ընդհանուր եկեղեցական ժողովոյ կը պատկանի, սակայն ՚ի վերջոյ կոնդակ մը կ'ուզարկէ եւ կը դառնայ Տաճկաստանի հայերէն երկու պատգամաւոր կուզէ, ի՞նչ, միթէ այն խնդիրը՝ որ այսքան յուզում կը պատճառէ եւ Վեհ. Կաթուղիկոսը զայն եկեղեցական ժողովոյ իրաւասութեան կը վերագրէ, այն խնդիրը երեք մարդով պիտի լուծէ, որոչէ:

(Ընդհանրական կողմէն— ո՛ւր է)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ես ալ այդ ոչը կ'ուզէի լսել ձեր բերնէն, երբ Վեհ. Հայրապետը կ'ըսէ թէ եկեղեցական Ընդհ. ժողովը գումարելու պէտք կայ, հարկ է մտածել, պէտք կա՞յ թէ ոչ Այդ խնդիրը չորս ամսէ ՚ի վեր եղած է, եւ ըսող եղաւ թէ պէտք է զայն թաղել, եւ ապագային վրայ մտածել: Իսկ Օղսէն էֆ. ընդդիմարան կեցաւ իմ դէմ պահ մ'առաջ այնպիսի անյարմար կերպով մը, որպէս թէ Եջմիածնի Վեհ. Կաթուղիկոսին ընդհանրական հայրապետութիւնը ժխտող կայ: Ես խնդիրն սկսած օրէն մաքառեր եմ, երեք զլուխ եւ երեք մարմին ունենալու դրութեան դէմ: Կարելի՞ է միթէ մեր ցիրոնցան ու վտարանդի Ազգին միութիւնը՝ որ միմիայն Եջմիածնի Վեհ. Կաթուղիկոսին, մեր ընդհանրական Հայրապետին վրայ եկեր մնացեր է, խղել: Ո՛չ երբէր: Անոնք որ այս տեսակ խօսք մը հնարեր են փառա մը չունին ՚ի ձեռին զայն ազգացուցանելու, եւ հասարակաց միտքը նախապաշարելու եւ յանկուցանելու դիտմամբ հնարած են միայն: Ո՛վ կրնայ ըսել թէ այսուհետեւ մեր եկեղեցեաց մէջ Սոյ Կաթուղիկոսին անունը պիտի յիշատակուի:

փոխանակ մեր ընդհանրական Հայրապետին անուն: Քա՛ւ լիցի, ինչ որ մեր նախահարք դարուց ՚ի դարս աւանդեր են մեզ, զայն պիտի պահենք անաղարտ եւ մեր նախահարք շաւղին պիտի հետեւինք:

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ.— (Ընդհանրական) Ինչո՞ւ ուրեմն այդ շաւղին խտտրեցար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Ահաւասիկ ծագու արժանի խօսք մ'ալ, զոր կրնեն առանց պատճառական ապացոյցներ ունենալու: Ազգայն պիտի յայտնէ թէ Ընդհ. ժողովը ո՛րքան խնաստութեամբ շարժած է այս խնդրոյն մէջ, Կամփոփեմ խօսքս ու կ'ըսեմ. ամենեւին հարկ չեմ տեսներ ՚ի Ռուսաստան պատգամաւորներ յուղարկելու՝ որպէս զի այս խնդրոյն վրայ խորհրդորդակցին, եւ ինչպէս Ազգաբեկեան էֆ. առաջարկեց այլ եւ այլ քննութիւններ ընելու հոն եւ խնդիրներ դրողելու:

Այսպէս ոչ ոք կը զրկեմք, եւ կամ կիմացընեմք Վեհ. Կաթուղիկոսին թէ չեմք կրնար պատգամաւորներ յուղարկել, Իսկ անոր համակրութիւնը զրաւելու համար ի՞նչ միջոց որ պէտք է, զայն մտածելով ՚ի դործ կը գնեմք: Յարաբերութեանց խնդիրը շատ ու շատ երկարածըցաւ, փութամբ զայն ուշադրութեան առնուլ, կոնդակի խնդրոյն վերջ տալով այսօր, որու այսքան երկարիլը պատիւ չ'ըրէր մեզ:

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ.— Փափագեան էֆ. ին պատասխանելու համար նախ իւր խօսքին եզրակացութիւնն ընեմ: Ըստ որում Վեհ. Կաթուղիկոսը նախ Ընդհ. ժողովոյ հետ բանակցելու համար երկու պատգամաւոր ուղած է, կը պահանջէ Փափագեան էֆ. որ բոլոր աշխարհի վերայ գտնուող հայերուն հետ ալ բանակցի ու անոնցմէ ալ պատգամաւորներ խնդրէ: Երկրորդ Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեան համաձայն գումարելի Ընդհ. ժողով մը կը շփոթէ Փափագեան էֆ. ուղուած երկու պատգամաւորաց հետ եւ կը կարծէ թէ Վեհ. Կաթուղիկոսն Ընդհ. ժողովը գումարած կը լինի այսպէս բոլոր հայաբնակ աշխարհներէն պատգամաւորներ ուղելով:

Շատ թիւր են այս գաղափարներն, երբ Վեհ. Կաթուղիկոսն եկեղեցական Ընդհ. ժողովը գումարելու հարկ տեսնէ, այն ատեն անշուշտ այն կանոնական սովորութեան կը հետեւի, զոր ՚ի նախնեաց անտի ունի մեր եկեղեցին եւ երկու պատգամաւոր չ'խնդրէր միայն Տաճկաստանի Հայերէն:

Բայց հիմայ խնդիրը այս կէտին վրայ չէ: Սոյ Կաթուղիկոսին ընտրութեան խնդրոյն առթիւ Վեհ. Կաթուղիկոսն անհամաձայն է մեր երեսօր. ժողովոյն հետ, եւ սխալած էք կըսէ ժողովոյն. կամ իրաւունք ունի կամ ո՛չ: Արդէն այս խնդրոյն համար երկուստէք զրաւոր բանակցութիւն մը սկսած է, բայց Վեհ. Կաթուղիկոսն ոչ եւս կուզէ զրջով շարունակել իւր բանակցութիւնը, այլ երկու պատգամաւոր կուզէ բերան առ բերան անոնց հետ խօսելու համար: Անտարակոյս երբ այս անհամաձայնութիւնը վախճան չգտնէ, Վեհ. Կաթուղիկոսը պիտի հարկադրի այն եկեղեցական Ընդհ. ժողովը՝ զոր կ'ակնարկէ, գումարել եւ անոր ներկայացնել խնդիրը: Բայց Վեհ. Կաթուղիկոսն առ այժմ հարկ չ'տեսներ այդ Գերագոյն ժողովը գումարելու, այլ կըսէ թէ այս տեսակ խնդիր մը՝ անոր կը պատկանի, եւ թէ ՚ի հարկին զայն պիտի գումարէ, նախապէս պարտազանցներն դատելու եւ պատժելու համար: Վեհ. Կաթուղիկոսին փափագանաց համաձայն պէ՞տք է պատգամաւորներ յղել, եւ բանակցութիւնը անոնց միջոցաւ կատարել, եթէ ոչ զրով, այս է ահաւասիկ խնդիրը եւ զայն պէտք է որոշել:

Այս պատգամաւորները չեն կրնար լիազօր իշխանութիւն ունենալ, թէեւ Վեհ. Կաթուղիկոսն ալ ուզէ, այլ իրենց պաշտօնը կ'գծուի եւ իրենք հմուտ եւ խոհուն անձեր կը լինին, եւ կերթան Վեհ. Կաթուղիկոսին տեղեկութիւններ կը հաղորդեն, կը բանակցին եւ թերեւս համաձայնութիւն մը գոյանայ. թէեւ իրողութիւնը կատարուած ալ լինի: Այդ իրողութիւնը չկատարուած Սոյ Կաթուղիկոսին ընտրութենէն անմիջապէս ետքը՝ զեռ օժման արարողութիւնը տեղի չ'ունեցած՝ կը յիշէք որ ես զատաջինն բողոք բարձի, պնդեցի որ Կաթուղիկոսական ընտրութիւնը չ'վաւերացուի, մինչեւ որ Վեհ. Կաթուղիկոսին հաւանութիւնն առնուի: Բայց ձայնս լսելի չեղաւ եւ ընտրութեան վաւերացումն, հետեւապէս օժուժը կատարուելով՝ գործադրեալ իրողութիւն մ'եղաւ:

Հիմայ պէտք է ապագային վրայ խորհիլ, պատգամաւորներու միջոցաւ բանակցութիւնը շարունակել եւ Հայաստանեայց եկեղեցւոյ ամբողջութեան դէմ սպառնացող ապագայ վտանգը վանել: Բացարձակ ցոյց տա՛մ այդ վտանգը: Երկիւղ կայ որ օր մը Սոյ Կաթուղիկոսը ստաջնութիւն ստանայ, Նա բարձրանայ եւ Եջմիածին նուաստանայ: Այդ պիսի վտանգի մ'առաջ-

քրն առնելու համար ի՞նչ որ պէտք է զայն մը-
տածեմք, օրինակի համար :

Էջմիածնի Եպիսկոպոս մը Սոյ Աթոռը բարձ-
րացնել, մեր եկեղեցւոյ վաղեմի ստորութեան
հակառակ կը դատէ Վեհ . կաթուղիկոսը եւ
մնասակար : Այս խնդիրը հիմա Ընդհ . Ժողովոյ
ատենանը ելած է . կրնամք հասուն կերպով ու-
րոշել որ նմանօրինակ դէպք մ'ալ տեղի չունե-
նայ առ յապայն եւ չեմ կարծեր որ այն ատեն
Վեհ . կաթուղիկոսն ալ սնդէ . եւ ինչ որ կա-
տարուած իրողութիւն մ'է, առ ոչինչ ուղէ գրել :

Արդէն կրբերը հանդարտած են հիմա, զըր-
կեմք ուրեմն ուղուած երկու պատգամաւորնե-
րըն, որպէս զի իրենց պաշտօնը կատարելով ի-
րենց տեղեկագիրը մատուցանեն եւ վերջ գտնէ
այս խնդիրը, որ այնչափ տագնապ ու երկիւզ
կը պատճառէ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Այս խնդիրն Ընդհ .
Ժողովոյ մէջ սկսած միջոցին ուր որ կը կար-
ծուէր թէ յանգի, ստուգիւ կամայ ակամայ ա-
րագօրէն դէզի հոն կերթայ : Ի սկզբան բաժան-
ման երկիւզ չկար եւ կը կարծուէր որ կիլիկիոյ
Աթոռը Պօլսոյ Պատրիարքութեան հետ պիտի
միանայ եւ արդէն Պօլսոյ Պատրիարքի օրով Ար-
սոյ վիճակին իրաւունքներն Պատրիարքարանն
իւրացնելով Առաջնորդներ սկսած էր ընտրել :

Բայց հիմա կրսեն թէ կիլիկիոյ կաթուղիկոսն
իւր վիճակային Առաջնորդները ինքն ինքնին
կընտրէ առ կախօրէն . Հետզհետէ բաժանման վը-
տանդներ կսկօին երեւիլ, վասն զի խնդրոյն
այն աստիճան կարեւորութիւն մը տրուեցաւ որ
անոր հետեւանքը աննշմարելի մնաց : Վեհ .
կաթուղիկոսը երկու պատգամաւոր կուղէ, իսկ
ես կառաջարկեմ բնու այդ պատգամաւորները
չ'ըրկել, որչափ ալ մեզ երեւի թէ խնդրոյն մէջ
քաղաքագիտութիւն չկայ, սակայն քաղաքա-
գիտութիւնը կը հսկէ արթուն, եւ այժմէն ցոյց
կուտայ այն հակթիւն ծայրը, զոր թերեւս հար-
իւր տարիներէ ետեւ պիտի գլորէ, եւ զքեզ
յանկարծ կը գտնես այն ծուղակին մէջ ուրկէ՛
կարծէիր թէ հեռի խուսեր եւ ճողոպրէր էիր :

Նի՞ թէ այնպիսի խնդիր մը լինէր մէջ տեղ, զոր
անհար երեւէր զարմանել, աղէկ էր պատգա-
մաւոր զրկելը : Երեւի . Ժողովը թերեւս պար-
զութեամբ Սոյ կաթուղիկոսն ընտրել տուաւ
եւ վաւերացուց այն ընտրութիւնը, կարծելով
որ էջմիածնի Վեհ . կաթուղիկոսին կարծիքն
ու հաւանութիւնն այս մասին ստանալու հարկ
չկայ : Բայց կայ եղբ արդարի հարկ մը, զոր
Ընդհ . Ժողովն անտես ըրեր է առանց կանխա-

կալ խորհուրդ մ'ունենալու : Սակայն պատգա-
մաւոր զրկելը կը նշանակէ թէ Ժողովը այս ա-
մենը խորհրդով ու գիտութեամբ ըրեր է, ին-
չս'ու ուրեմն այդ տեսակ բեռ մ'առնու վրան :
Պահ մ'առաջ Փափագեան էֆ . կրէր թէ բոլոր
խնդիրը Վեհ . կաթուղիկոսին չ'հարցուելէն ծա-
գած է, եւ այդպիսի պարտաւորութիւն մ'ու-
նենալը կընդունէր : Սակայն մեք զիտեմք որ
կատարուած իրողութիւնը, մասնաւոր բան մ'է,
եւ այս պարագային մէջ մեր պարտաւորութիւնն
անտես առնելով, ընդհանուր կանոնի մը, ըս-
կըզբունքի մը կարգը չ'անցուցինք զայն : Մուր-
հակ մ'էր մեր տուածը որ եկեղեցւոյ կուգայ
կը վերադառնայ նորէն, բայց Վեհ . կաթուղիկո-
սը զայն այժմէն ետ առ չ'կրնար ըսել, այլ պար-
տաւորութիւն ունէր բողոքելու եւ բողոքեց :

Նկատողութեան արժանի պարագայ մ'ալ կայ,
կիլիկիա մեր կաթուղիկոսութիւնը երկուքի
բաժնեց արդէն, եւ ո՛վ կրնար այս բաժանու-
մը գուշակել : Դասակարգութիւն ունեցող եկե-
ղեցիք կուզեն որ բաժնուին իրենց մէջ, եւ
թերեւս կուզեն որ մեք ալ էջմիածնական ու
Սսական ըսուիմք : Մեք այս տեսակ բաժանում
չենք ուզեր, բայց կրբերը ստէպ կասաջնոր-
դեն զմարգ՝ ուր որ չէր ուզէր երթալ բնաւ,
երբ հանդարտօրէն կը խորհէր իւր օգուտը :

Ընդհ . Ժողովն եթէ անկեղծօրէն շարժեցաւ
այս Սոյ կաթուղիկոսական խնդրոյն մէջ, ե-
թէ ստուգիւ կիլիկիոյ մէջ տեղի ունեցած օրա-
կան գէպերը միջոց չտուին որ Վեհ . կաթու-
ղիկոսին կարծիքն ու կամքը ստանար, այս ա-
մենը զրեմք անոր անպատրուակ եւ ըսեմք թէ
կատարուած իրողութիւնը բացառութիւն մ'է,
եւ ուրիշ առթիւ Զերհասանութիւնը պիտի ստա-
նամք : Այն ատեն խնդիրը կը վերջանայ, ոչ պատ-
գամաւոր զրկելու, ոչ եկեղեցական Ընդհ . Ժողով
գումարելու հարկ կը մնայ, զոր գումարել կու-
զեն, զմեզ ամբաստանութեան ներքեւ թողելու
համար : Յանուն ազգային միութեան վերջացը-
նեմք այս խնդիրը եւ ինչ որ ըսի գրեմք Վեհ .
կաթուղիկոսին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Նախ յանուն Ազգ . Վար-
չութեան Քաղ . Ժողովոյ կը հերքեմ Օղսէն էֆ . ի
այն գիտողութիւնը թէ կիլիկիոյ կաթուղիկոսը
Առաջնորդներ կը կարգէ : Ազգ . Քաղ . Ժողովը
Սահմանադրութիւնը գործադրելու համար հը-
րանանդներ զրկած է գաւառները . հետեւապէս
նոյն իսկ կիլիկիոյ թեմերուն մէջ ալ առաջնոր-
դական ընտրութիւնը ըստ Սահմանադրութեան

կը կատարուի, Գաւառական Ընդհ . Ժողովով
եւ կեզր . Վարչութիւնը միայն այդ ընտրու-
թիւնը կը վաւերացնէ, իսկ կիլիկիոյ կաթուղի-
կոսը կրնայ միայն օրհնութեան կոնդակ յու-
ղարկել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— Այդ խօսքը ի՞նչ կը
նշանակէ, բացատրեցէ՛ք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Որովհետեւ կիլիկիոյ
կաթուղիկոսը իւր թեմի Ժողովրդեան հողեւոր
Հայրն է, առաջնորդական ընտրութեան պարա-
գային մէջ օրհնութեան կոնդակ կուտայ իւր
կողմանէ, ինչպէս որ Երուսաղիմայ Ս . Պատրի-
արքն ալ Եղիպտոսի Առաջնորդին օրհնութեան
կոնդակը կուտայ, ընտրութիւնը սահմանադրա-
պէս կատարուելէ եւ կեզր . Վարչութեան կող-
մանէ վաւերացուելէ ետեւ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ.— Երբէք այդ կարծի-
քը չեմ ընդունիր եւ իբր նախագահ Ազգ . Վար-
չութեան, կրսեմ թէ կիլիկիոյ կաթուղիկոսն
արտօնութիւն ունի սահմանադրապէս իւր վի-
ճակաց Առաջնորդներն հաստատելու եւ իհար-
կին պաշտօնէ ձգելու, իսկ կեզր . Վարչութիւ-
նը Բ . Դրան Թագրիբը գրելով առաջնորդական
Ֆէրման կառնու միայն եւ կը զրկէ :

Քանի մը Ժողովականք միաբերան ձայն բառ-
լով խօսակցութիւն մը կսկսին, եւ պահ մը շը-
փոթ կը տիրէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Նախագահ Սրբազանին
այս յայտարարութենէն կերելի որ իրեն եւ
Ազգ . Վարչութեան մէջ կարծեաց անհամաձայ-
նութիւն մը ծնած է այս խնդրոյն վրայ : Եթէ
իրենց մէջ այս մասին չ'կրնան միաբանիլ, այն
ատեն բնապէս անհամաձայնութեան նիւթ ե-
ղող խնդիրը Ընդհ . Ժողովոյ ատենանը կը բերեն
եւ անոր իրաւարար որոշումով խնդիրն իւր
լուծումը կստանայ : Ուրեմն այս կէտին վրայ
այժմէն աւելորդ է խօսիլ :

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— կիլիկիոյ կաթուղի-
կոսը չ'կրնար ինքնին այս տեսակ ընտրութիւն-
ներ ընել եւ պէտք է որ Պօլսոյ կեզր . Վար-
չութեան հետ կապակցութիւն ունենայ, ու-
րեմն Ազգ . Վարչութիւնը թող խօսք տայ որ
մինչեւ այս խնդիրը իւր լուծումը գտնէ առաջ-
նորդական ընտրութիւններ չ'լինին կիլիկիոյ վի-
ճակին մէջ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Երբ կիլիկիոյ վիճակային
առաջնորդաց ընտրութեան նկատմամբ խօսե-

ցայ, նախագահ Սրբազանը թիւրիմացութեամբ
ըմբռնեց իմ խօսքս, եւ տարբեր կարծիք յայտ-
նեց : Ազգ . Վարչութեան ատենանին մէջ կար-
ծեմ կարող ենք խնդիրը մէջ տեղ դնել, եւ
զիրար համոզելով միաբանիլ, բայց եթէ հա-
կառակը պատահի, այն ատեն ինչպէս ըսի Ընդհ .
Ժողովոյ իրաւարարութեան վճռոյն կը զիմեմք
եւ խնդիրը կը վերջանայ : Ուստի Ընդհ . Ժողո-
վոյ ատենանին մէջ այս կէտին վրայ այժմէն խըն-
դիր յարուցանելու հարկ չկայ, Իսկ զայնով Վեհ .
կաթուղիկոսի կոնդակի խնդրոյն՝ Օղսէն էֆ .
կրսէ թէ քանի որ Սոյ կաթուղիկոսի ընտրու-
թիւնը մէկ անգամու համար եւ եթէ այդ կեր-
պով կատարեցաւ եւ ուրիշ անգամ չ'պիտի կըրկ-
նուի, զրեմք Վեհ . կաթուղիկոսին, սակայն
ի՞նչ հարկ կ'այ գրելու՝ մինչդեռ անպատրուակ
հոս Ընդհ . Ժողովոյ մէջ այս տեսակ յայտարա-
րութիւն մը տեղի կուեննայ : Եթէ քննութիւն
մը, դատաստան մը բացուէր այս խնդրոյն վրայ,
թերեւս իրաւունքը Ազգ . Երեսի . Ժողովոյ
տրուէր, կազաչեմ մի՛ ստիպեք զիս որ դառ-
նամ այն որոշմանց վրայ, որ ասկէվեց տարի
առաջ տեղի ունեցան Արարատեան Մայր Ա-
թոռոյ անկախութեան նկատմամբ :

Ոչ եւս կուզեմ խօսիլ եւ կը լռեմ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ.— Թէ ինչ հետեւութիւն
կրնայ ունենալ Վեհ . կաթուղիկոսին ուղած
պատգամաւորներն յուղարկելը, Օղսէն էֆ .
քաջ բացատրեց քիչ մ'առաջ : Երբ այդ պատ-
գամաւորներն երթան անշուշտ Վեհ . կա-
թուղիկոսը բացատրութիւն պիտի ուղէ եւ
կամ իւր կասկածներն պիտի ցրին կամ աւե-
լի ուժ գանեն : Ուստի աւելի աղէկ է այս
ժանր խնդիրը վերջացնելու համար Վեհ . կա-
թուղիկոսին նամակ մը գրել Օղսէն էֆ . ի ա-
ռաջարկութեան համեմատ : Այս խնդիրը քանի
երկարի, այնքան նոր նոր կնճիւղներ երեւան
կենեն, ինչպէս որ հիմայ ալ Սոյ վիճակային
առաջնորդաց ընտրական խնդիրը ծաղեցաւ,
խնդիրներ որ աւելի կը ծանրացնեն մեր վիճակը :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Ես այժմ ոչ եւս Վեհ . կա-
թուղիկոսի կոնդակին վրայ պիտի խօսիմ, այլ
ուրիշ միջանկեալ խնդիր մը նկատողութեան
պիտի առնում . . . :

(Երբ մը Երբեմնեքէ — Ինչպէն Երբեմնեք է)

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— (Երբեմնեքէ) Եթէ խընդ-
րէն դուրս էր, պէտք էր կանխաւ ազգարարու-
թիւն լինէր եւ բնաւ թոյլ չը տրուէր այդ խընդ-

րոյն վրայ խօսելու : Ուստի ես կը շարունակեմ :
Կըսուի թէ Սոսյ Կաթուղիկոսը իրաւունք ունի
անկախօրէն առաջնորդներ կարգելու , բայց . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստուգիւ խնդրէն կը շե-
ղիք , ատենաբան էֆ , ուստի չեմ կրնար թոյլ
տալ որ շարունակէք Ձեր խօսքը .

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ես կը բողոքեմ այն
յայտարարութեան դէմ եւ կուզեմ որ բողոքս
արձանագրի :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Ես ալ միեւնոյն խնդ-
րոյն վրայ մտադիր էի խօսիլ եւ այսնպատակաւ
Գիւանէն խօսք խնդրած էի , բայց քանի որ նե-
րելի չ'լինիր այդ կէտին դատնալ , կը լռեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ վե՛հ . Կաթուղիկոսի
կոնդակի խնդրոյն վրայ բաւական վիճարանու-
թիւններ եղան , եւ կարծիքները լուսաւորեցան ,
բայց ըստ որում մինչեւ ցարդ մեծագոյն մաս
չգոյացաւ , չպիտի կրնայ որոշում մը տրուիլ
եւ այսպէս նիստը պիտի վերջանայ առանց ար-
դիւնք մ'ունենալու : Ուստի Ժողովոյն ուշա-
դրութիւնը կը հրաւիրեմ վերստին մեծագոյն
մասի խնդրոյն վրայ՝ որու նկատմամբ արդէն
զիտողութիւններ եղան 'ի սկզբան :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Յաջորդ նիստին այս

մեծագոյն մասի խնդիրը Ժողովոյն ներկայացու-
ցէք :

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԻ
ՀՐԱԺԱՐԵԱԼ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Գիւանը ներկայութեան տուժարէն ստուգե-
լով որ երեսփոխաններէն

Տօքթէօն Ռաֆայէլեան էֆ .


Թիւսիւղեան Սեպուհ

առանց հիւանդութեան եւ ուղեւորութեան
պատճառի շարունակ Ժողովոյ երեք նիստերէն
բացակայ գտնուած են , Ժողովն ըստ օրինի հը-
րաժարեալ հրատարակեց զանոնք :

Յաջորդ նիստն յետ ութ աւուր գումարել ու-
րոշեցաւ : Ատենը վերցաւ ժամ 9 1/2 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՏԵԱՆ

Բ. ԱՏԵՆԱԴՊԻՐ
Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները: